ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջնորդել Հիսուսի Նման
Մաս 3

«Ձեր միջի մեծը թող կրտսերի պես լինի, իսկ առաջնորդը՝ սպասավորի պես։» Ղուկաս 22:26

Ինչպե՞ս առաջնորդել ուրիշներին Հիսուսի նման

1. Օրինակ եղիր նրանց համար

«Քանի որ ես ձեզ օրինակ ծառայեցի, որպեսզի ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն կերպ անեք։» Հովհաննես 13:15

«Ոչ թե նրանց տիրելով, որ բաժին են ընկել ձեզ, այլ հոտին օրինակ լինելով։» Ա Պետրոս 5:3

«...օրինա՛կ եղիր խոսքով, վարքով, սիրով, հավատով, անարատությամբ։» Ա Տիմոթեոսին 4:12

2. Քաջալերիր նրանց ավելի մեծ նպատակների

«Գնա՛, ինչ որ ունես, վաճառի՛ր ու աղքատների՛ն բաժանիր և երկնքում գանձ կունենաս։» Մարկոս 10:21բ

«Երբ գնաք, քարոզե՛ք ու ասե՛ք, որ երկնքի արքայությունը մոտեցել է։ Հիվանդներին բժշկե՛ք, մեռելներին հարությո՛ւն տվեք, բորոտներին մաքրե՛ք, դևերին հանե՛ք. ձրի ստացել եք, ձրի էլ տվե՛ք։» Մատթեոս 10:7-8

«Արդ գնացե՛ք, աշակե՛րտ դարձրեք բոլոր ազգերին՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, սովորեցրե՛ք նրանց պահել այն ամենը, ինչ ձեզ պատվիրեցի.» Մատթեոս 28:19-20

3. Գնահատիր նրանց կարողությունները

«Հիսուսը սիրալիր նայեց նրան.» Մարկոս 10:21ա

«Ով հավատում է ինձ, ինքն էլ նույն գործերը կանի, որ ես եմ անում, և դրանցից է՛լ ավելի մեծ բաներ կանի, որովհետև ես իմ Հոր մոտ եմ գնում։» Հովհաննես 14:12

«...բարի խոսքն ուրախացնում է նրան։» Առակներ 12:25

4. Վստահիր նրանց որոշակի պարտականությունների մեջ

«Ես քեզ եմ տալու երկնքի արքայության բանալիները, և ինչ որ երկրի վրա կապես, կապված կլինի երկնքում, և ինչ որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում։» Մատթեոս 16:19

«Քիչ բանի մեջ հավատարիմը շատի մեջ էլ է հավատարիմ.» Ղուկաս 16:10

«...ամեն բանի հանդեպ հույս ունի, ամեն բանի համբերում է։» Ա Կորնթացիներին 13:7

5. Անկեղծորեն հայտնիր նրանց քո կարծիքը

«Հիսուսը նրանց ասաց. «Ձեր թերահավատության պատճառով։ Ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք...ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի։» Մատթեոս 17:20

«Ձեր բերանից թող ոչ մի վատ խոսք դուրս չգա, միայն այն, որ բարի է, հավատի շինության համար պիտանի...» Եփեսացիներին 4:29

6. Վարվիր նրանց հետ հավասարի պես

«Ձեզ այլևս ծառաներ չեմ կոչում...Ձեզ բարեկամներ եմ կոչում.» Հովհաննես 15:15

«Բայց երբ Քրիստոսը՝ մեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ դուք էլ նրա հետ փառքով կհայտնվեք։» Կողոսացիներին 3:4

7. Աղոթիր նրանց համար

«Բայց ես քեզ համար աղոթեցի, որ քո հավատը չպակասի.» Ղուկաս 22:32

«Բայց միայն նրանց համար չեմ խնդրում, այլ նաև նրանց, ովքեր նրանց խոսքի միջոցով կհավատան ինձ։» Հովհաննես 17:20

Հաջորդ Քարոզի Թեման

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովիվ Սարո Խաչիկեան